

Արարատեան դաշտում նոյն գործիքին ասում են էտոց: Այս բառերը տրոհում են իբր. յոս-ոց, էտ-ոց (Հմմ. գործիքների անունները. սպ-ոց, խարտ-ոց եւ այլն): Նկատելով յառաջ եւ առաջ ձեւերը, ես լերկացնում եմ յոս բառն իբր օտ եւ ձայնաւորներին իրենց նախնաւոր արժէքը տալով՝ զուգադրում եմ.

- աւտ-ոց > օտ-ոց (աւ = օ).
- այտ-ոց > էտ-ոց (այ = է).

Ինչպէս տեսնում էք՝ սրանք միեւնոյն բառերն են, որ գալիս են տարբեր լեզուական միջավայրերից, ուր տարբեր խցաններով գոցած են միեւնոյն յորանջը: Օրինակ տալու համար փորձառական մեթոդի ամբողջական կիրարկութեան, ես այս բառերի ստուգարանութիւնը շարունակում եմ մինչեւ վերջ: Ունինք ուրեմն աւտ եւ այտ: Մեր տեսութեան համաձայն լաւ եւ յտ խմբերի մէջ չքացած են Հին ձայնաւորներ, որ կարծում եմ եղած են ա: Վերականգնելով կորած ձայնաւորը, ես ստանում եմ նոր զուգահեռ. ա՛ւտ-ոց, ա՛յտ-ոց: Այս ձեւերի երկրորդաւորը սղած ու կորած են զօրաւոր շեշտից յետոյ գալու պատճառով եւ դարձած են աւտ, այտ: Միաժամանակ այս ձեւերի մէջ յ-ն եւ լ-ը գտնուում են երկու ձայնաւորի միջեւ եւ գալիս են շեշտից յետոյ, հետեւապէս հաւանական է, որ նրանք փոխարինում են մի վաղեմի բաղաձայն, որ կարծում եմ եղած է տ (Հմմ. զուգահեռ ամփոփումը. հա՛ւտար > հա՛ւար || հա՛յար > հար > հօր || հայր): Մենք հիմա կը ստանանք մի միակ նախաձեւ իբր աւտ-ոց, որից ծագում են թէ՛ օտաց եւ թէ՛ էտոց ձեւերը, բայց տարբեր միջավայրերի մէջ: Ահաւասիկ զուգադրութիւնը երկու տարբեր միջավայրերի մէջ ստացուած երկու տարբեր կազմութեանց.

- ա. Միջավայր, որ յորանջը { ա՛ւտոց > ա՛ւտոց > գոցում է լ-ով. օ՛տոց.
- բ. Միջավայր, որ յորանջը { ա՛յտոց > ա՛յտոց > գոցում է յ-ով. է՛տոց.

Աւտ. կազմութիւնը զուգահեռ է հաւար կազմութեան, որ տալիս է հար > հօր. իսկ միւսը՝ աւտ > օտ:

Այտ. կազմութիւնը զուգահեռ է հայար կազմութեան, որ տալիս է հայր > հէր. իսկ միւսը՝ այտ > էտ:

Ատաւ վերականգնածս բառաբանը աւարմատի կրկնաւորն է. Հմմ. պոչ-ատ, փէտ-ատ, որ մի Հին փայտ-ատ է եւ կացնի մի տեսակն է: Ատ արմատը նշանակում է կտրել. Հմմ. հատ, իսկ աւտ-ատ-ել պիտի նշանակէր «կտրատել» եւ ուրեմն *աւտատոց պիտի նշանակէր «կտրատող» ինչ որ «յոտոց» եւ «էտոց» բառերի բուն իմաստն է:

Թողնենք անջատ բառերի լուծումները եւ անցնինք լեզուական ձեւերի մեկնութեան, որ շատ աւելի վճռական են տեսութեանս համար:

4. Շաղալէն — շաղալօն: — Ժողովրդական երգն ասում է.

Անձրեւ էկաւ շաղալէն,
Ուռու տերեւ զողալէն.

«Շաղալէն, զողալէն» նշանակում են «շաղալով, զողալով», այսինքն ներկայ դերբայներ են: Արարատեան բարբառը իր ներկայ դերբայը կազմում է օն անանցով³: Վերը բերած ձեւերին զուգահեռ նա ունի «շաղալօն, զողալօն»: Չոյլ ձայններին իրենց նախաւոր արժէքը տալով եւ երկու ձեւերն իրար զուգադրելով՝ մենք կը ստանանք.

- շաղա՛լայն, զողա՛լայն (այ = է).
- շաղա՛լաւն, զողա՛լաւն (աւ = օ):

«Շաղալէն, զողալէն» մակրայներ են, որ կշռում են դասական «դիչերայն» եւ նման ձեւերին. Հմմ. *շաղալայն: Ինչպէս տեսնում էք մեր զուգադրած ձեւերը նոյն են, միայն թէ ուր մէկն ունի լ, միւսն ունի յ, որ գալիս են շեշտից յետոյ եւ երբեմն եղած են երկու ձայնաւորի միջեւ, որոնք սղած ու կորած են յն եւ լն խմբերի մէջ: Այս ձեւերը գալիս են երկու տարբեր լեզուական միջավայրերից:

5. Տեսանէր — տեսանիւր, որ կրաւորական ձեւեր են: Գիտենք, որ իւր ձայնը մի Հին իաւ է (տես իմ յօդուածը. «ԵՃ, իւ». «Հանդ. Ամս.» 1930, Թ. 5—6), իսկ է ձայնը մի նախաւոր իայ (տես իմ յօդուածը «է». «Հանդ. Ամս.» 1930, Թ. 11—12): Վերականգնելով ձայնաւորներին նախաւոր արժէքը եւ զուգադրելով երկու վաղեմի ձեւերը՝ մենք կը ստանանք.

³ Տես H. Adjarian, Classification des dialectes arméniens, էջ 20.

- տեսան-ի-այր > -էյր > -էր.
- տեսան-ի-աւր > -եւր > -իւր.

Պարզ երեւում է, որ սրանք միեւնոյն ձեւերն են, միայն թէ մի տեղ յօրանջը գոցած է յ-ն, միւս միջավայրում՝ լ-ը: Գրական լեզուն փորձած է օգտագործել ձեւերի այս տարատեսակութիւնը իւր ձեւը կիրարկելով բացառապէս կրաւորական ձեւի համար, իսկ -էր ձեւը ներգործական բայի համար, բայց այս փորձը «գրական» ձեռնարկութիւն լինելով՝ թւում է թէ վիժած է: Մէկ միջավայրի համար տեսանիւր եղած է ե՛ւ ներգործական ե՛ւ կրաւորական, ինչպէս տեսանէր ձեւն է եղած ուրիշ միջավայրի մէջ: Տեսանիւր ձեւը ընտիր չէ նկատուած, ուստի արմատ չէ բռնած: Լաւագոյն հեղինակները -էր ձեւը կիրարկում են ե՛ւ կրաւորական ե՛ւ ներգործական իմաստով:

6. Կ՛էնիւմ — կ՛օնիւմ. — Ժողովրդական երգն ասում է.

Ինչ կ՛էնիւմ ես էն եարբ՝
Պարտուի՛ տարուն զու քայ (կու գայ):

Այսինքն. «Ի՛նչ կ՛անեմ (ինչի՛ս է պէտք) այն սիրածը, որ կը թափառի եւ տարին բոլորած՝ կը գայ»:

Սայաթ-Նովան ասում է.

Ի՛նչ կ՛օնիւմ հէքիմն, ի՛նչ կ՛օնիւմ ջառէն:
այսինքն. «Ի՛նչ կ՛անեմ (ինչի՛ս է պէտք) բժիշկը, ինչ կ՛անեմ վիրաբուժը»:

Կ՛օնիւմ եւ կ՛էնիւմ երկուսն եւս նշանակում են կ՛անեմ եւ գալիս են առնել դասական ձեւից: Առնել ես վերականգնում եմ իբր արան-իլ (Հմմ. արմատի կրկնաւոր ձեւը արար-ի), ուր երկրորդ ա-ի անկման հետեւանքով եւ ն-ի հարեւանութեամբ ր-ն փոխած է իր երանդը եւ հնչած ու (Հմմ. ամա՛ր-ան > ամա՛րն, բայց՝ ամա՛րն > ամարա՛րն): Մեր վերականգնած ա՛ր-ան-իլ ձեւի մէջ ր-ն գտնուում է երկու ձայնաւորի միջեւ եւ գալիս է շեշտից յետոյ, ուստի փոխարինուած է մի լեզուական միջավայրում լ-ով, մի ուրիշ միջավայրում յ-ով եւ ամփոփումով ստացուած է տարատեսակ արդիւնք: Ահաւասիկ նրանց տարբեր հոլովոյթի ծիրը.

- ա՛րան-իւմ > ա՛րն-իւմ > է՛նիւմ
- (այ → է).
- ա՛ւան-իւմ > ա՛ւն-իւմ > օ՛նիւմ
- (աւ → օ).

Թիֆլիսի բարբառը չունի օնիւմ, բայց իր ապառնին է. կ՛օնիւմ. իսկ միւս ձեւը տալիս է. կ՛էնիւմ:

7. Կայ — կօ: Ձէյթունցին ասում է. կօ, չկօ, այսինքն՝ կայ, չկայ: Սրանք «կամ» բայի ներկայ եզ. Յ-ը դէմքեր են: Վերականգնելով նախագրական խոնարհման կարգը սանսկրիտի կարգին զուգահեռ՝ մենք կը ստանանք.

- կա՛մի, կա՛սի, կա՛տի, որ դարձած են.
- կա՛մ, կա՛ս, կա՛յ:

Առնելով Յ-ը դէմքը — *կա՛տի — մենք տեսնում ենք, որ տ-ը գալիս է շեշտից յետոյ եւ երկու ձայնաւորի միջեւ, ուր նա տարբեր լեզուական միջավայրերում փոխարինուած է մի տեղ յ, միւս տեղ լ ձայնով: Ահաւասիկ հոլովոյթի ծիրը.

- կա՛տի { կայի > կայ.
- { կաւի > կաւ > կօ (աւ → օ).

Այսպիսով աւ եւ այ, որ նոյն է թէ՛ է եւ օ լծորդ են իրար, իրենց բաղադիր լ-ի եւ յ-ի պատճառով: Երկու դէպքում եւս նախաձեւի վերջին ի-ն ընկած է:

Այս է մեկնութիւնը նաեւ մեր կատարեալ Յ-ը դէմքի աւ վերջաւորութեան. օրինակ՝ հատաւ, ասաւ, սփածաւ, լուաւ եւ այլն: Այս ձեւը գալիս է մի նախագրական ա՛տի ձեւից, որ զուգահեռն է սանսկրիտի եզ. Յ-ը դէմքերին: Շեշտից յետոյ եւ երկու ձայնաւորի միջեւ տ-ն փոխարինուած է լ-ով եւ տուած է աւի, ուր վերջին ի-ն ընկած է. այսպէս՝ *հատատի > *հատաւի > հատաւ (Հմմ. հա՛տար > հա՛ւար > հա՛ւր):

8. Էկո՛, էկուր. Ունինք գաւառական էկո՛ հրամայականը, որ նշանակում է է՛կ, եւ ուր է-ը լերկացած է եւ հնչում է է: Այս ձեւը կշռում է դասական. կեցո՛, ապրեցո՛ ձեւերին եւ կարծում եմ ծագում է մի նախաւոր էկո՛յ ձեւից, ուր յ չքացած է զօրաւոր շեշտի աղդեցութեան տակ: Մեր հրամայականները սովորաբար կազմում են արածանցով (տես մեր յօդուածը եչ-ի մասին «Հանդ. Ամս.» 1930, Թ. 7—10): Եկուր ձեւը եւ լուծում եմ իբր էկո՛ւար, ուր շեշտի աղդեցութեան տակ ա-ը սղած ու չքացած է (Հմմ. պաշտա՛ւան > պաշտա՛ւն): Չուգադրելով երկու ձեւերը մենք կը ստանանք.

եկո՛յ.

եկո՛ւ-ար > եկո՛ւր:

Ուր տեսնում ենք նոյն յ-ն ու ւ-ը, որ տարբեր միջավայրերում խցած են նոյն յօ-րանջը:

9. Այս կարգի երեւոյթ է նաեւ ոյ — ու փոխանցումը. ինչպէս ունինք հայր — հար, այնպէս ունինք յո՛յս — յո՛ւս, լո՛յս — լո՛ւս, ուր շեշտի տարբերութիւն չկայ, բայց յօ-րանջները գոցուած են տարբեր ձայներով յ եւ լ:

10. Մի շատ փայլուն օրինակ. ունինք դաս բառը, որի սեռականն ու գործիականն են. դասու: Այստեղ միեւնոյն լ ձայնը սեռականի մէջ կը լուծուի է յ-ին. հմմ. որդւոյ, գործիականի մէջ վ-ին (ւ-ին). հմմ. որդւով: Այս ձևի մէջ յ եւ լ (վ) այնքան մերձաւոր երանգով են հնչած, որ Ս. Մեսրոպի սուր ականջը չի տարբերած երանգները եւ երկու ձևն եւս տառադարձած է ւ-ով: Այս ձևը ցոյց է տալիս, որ գաւառական որդու ձևը խորին հնութիւն ունի:

11. Էօծ, էառ: Ահաւասիկ սոսկալի յօ-րանջով բայաձևեր, որ ստեղծած է յօրանջ-քից այնքան խուսափող մեր գրաբարը: Ի՞նչն է այս երեւոյթի պատճառը: Գիտենք, որ ան ածանցով եւ միավանկ արմատ ունեցող բայերը իրենց կատար. եզ. 3-դ դէմքը կազմում են պարզ արմատն առնելով կամ նրան տալով մի նախադիր յաւելում — ե. հառ, եհար. բեր, եբեր. տես, ետես եւ այլն: Պէտք է ունենայինք ուրեմն օծ — եօծ, առ — էառ: Եւ իրօք այս ձևն են աւանդում հնագոյն ձևադիրները: Բայց հին է նաեւ էօծ, էառ գրութիւնը, որ կարծում եմ է չէր ունենայ, եթէ իրականի մէջ՝ գրողը է լսած չլինէր: Լուծելով ե-ն իբր yä, մենք կը ստանանք yä — ած, yä — առ (եօծ, էառ): Մենք այստեղ նկատում ենք մի յօրանջը äw, որ արտաբերութեան ընթացքին բնական բերումով հնչուած է իբր yäy — ած, yäy — առ: Այս ձևի մէջ երեւցած երկրորդ յօվարը — y — պարզապէս մի խցան է, որ գոցում է յօ-րանջը. նրա ծագումը արտաբերական է. նա ոչ երկար կամ կարճ ի-ի սղում է, ոչ որ եւ է բաղաձայնի փոխարինութիւն. նա պարզապէս ծագած է «յօնչէ». բայց տուած է մի խումբ yäy, այսինքն եյ, որ ինչպէս գիտենք հնչուած է է: Այս նորոգութիւնը սո-

ժամայէս դիւրացրած է արտաբերութիւնը հին yä-աւծ-ը դարձնելով yäy — աւծ (եյաւծ), որ աւելի դիւրին է արտաբերել, բայց եյ խմբի է-ացումով նորից ստեղծուած է նոր յօրանջը: Այսպիսով հին հայը արտաբերական տեսակէտով՝ այս ձևերի մէջ՝ ինչպէս կ'ասեն՝ մրից ելած՝ մրջուրն է ընկած. մի յօրանջքից ազատուելով՝ ստեղծած է նորը: Թէեւ այս կարգի յ-եր, որ ծագելին «յօնչէ», մեր լեզուի մէջ համարեա թէ չկան, բայց բառերի եւ ձևերի նախաւոր կերպարանքը վերականգնելու ժամանակ պէտք է նկատի ունենալ նաեւ ա՛յս պարագան, այսինքն՝ որ կարող են լինել յ-եր, որ պարզապէս արտաբերական ծագում ունին:

12. Մի վերջին օրինակ, որ թէեւ վերաբերում է օտար լեզուների, բայց նպաստում է լուծելու մի շատ կարեւոր խնդիր եւ ցոյց է տալիս մեր տեսութեան արժէքը նաեւ օտար լեզուների համար: Գիտենք, որ հին հայերէնը օ չունէր. Ս. Մեսրոպ գրում ու կարգում էր աւ (aw): Արդ ես կարծում եմ, որ օտար լեզուների օ-երը նոյնպէս երբեմն եղած են կա՛մ n կամ աւ: Այս մասին աւելի հանգամանորէն կը խօսեմ n-ին վերաբերեալ գրութեանս մէջ: Բայց ահա մի օրինակ, որ ջուր է լցնում մեր ջաղացքին: Ռուսն ունի volkñ բառը, որ նշանակում է «գայլ»: Այս բառը պէտք է արոհել իբր vol-kñ: Մեր տեսութեամբ 1k լուին խմբի մէջ չքացած է մի հին ձայնաւոր. եւ իրօք հին սլաւ լեզուն ունի նոյն բառը կարճ ի-ով ǐ. հմմ. vǐkñ⁴ բառի բունն է ուրեմն vol-: Գիտենք, որ մեր Գ-ը կը լուծուի է հնդեւր. v-ին. հմմ. հայ. գիտել եւ սնակ. veda, սլաւ. vědeti: Ռուս օ-ն լուծելով իբր աւ եւ զուգադրելով հայ ու ռուս բառերը, մենք կը ստանանք.

գայլ (գաւառ. գէլ. այ -> է):
vawl- (վաւլ):

Մենք տեսնում ինք կրկին նոյն երեւոյթը, որ հանդիպեցինք հայ բառերի լուծման ժամանակ: Ահաւասիկ երկու տարբեր միջավայր, ուր հին յօրանջները խցուած են տարբեր ձայներով, որ են յ կամ լ (յիշել, որ յլ եւ ՚լ խմբերի մէջ չքացած են հին ձայնաւորներ, որ մնացած ա-երի հետ կազմած են յօրանջը. գայլ + Չ + լ, vaw + Չ + լ:

⁴ Տես A. Meillet, Le slave commun, էջ 69.

Այս օրինակը ցոյց է տալիս, որ անհիմն չէ մեր ենթադրութիւնն այն մասին թէ օտար օ-երը հին n-եր են կամ աւ-եր: Այնչենք հիմա մեր նիւթին:

Յունարէնը ունի յոգնակի ածանց, օի; որ i վերջացող բառերի վերջում տալիս է ioi, օր. Κύριοι, χαλδοι (χαλδαῖοι): Յոգնակի -ուի վերջաւորութեան օ-ն համարելով մի հին աւ, ես վերականգնում եմ իբր iawi-իալի (հմմ. արդի-աւf > արդիof > արդիօf, ուր աւ դարձած է օ): Վերականգնածս իալի ձևի մէջ ւ-ը գտնուում է երկու ձայնաւորի միջեւ եւ գալիս է շեշտից յետոյ (աւ-ը իր նախաւոր շեշտի շնորհիւ է, որ դարձած է օ): Այսպիսով ւ-ը այն պայմանների մէջ է գտնուում, որ կարող է նկատուել իբր մի վաղմի բաղաձայն փոխարինող: Եւ իրօք այդպէս է. կարծում եմ, փոխարինուած բաղաձայնն է բ (հմմ. *բանի՛բի > *բանիւի > բանիւ): Վերականգնելով չքացած բաղաձայնը, մենք կը ստանանք. — իաբի. — իալ-դիաբի: Այս ձևի մէջ իա ձուլուելով իրար պիտի տային եբի. — իալդեբի, որ վրացերէն նշանակում է իալդիներ: Վրաց լեզուն իր յոգնակին կազմում է — եբի ածանցով. որ լուծելի է իբր ի-աբի, ուր ի-ն վրացերէն բառերի ուղղական հոլովի ածանցով, իսկ արի կը լուծուի է յոյն օւ ածանցին, որ ինչպէս տեսանք պէտք է վերականգնել իբր -awi, իսկ սա՛ իբր -abi: Այսպէս օրինակ. կաց-ի (մարդ) — կացեբի (մարդիկ). ծիգնի (գիրք) — ծիգնեբի (գրքեր) աւեխ-ի (հայ), աւխեբի (հայեր)⁵: Այսպիսով յոյն օւ եւ վրաց եբի կը լուծուի են իրար եւ նախադրական շրջանին ծագած են *իաբի ընդհանուր ձևից, որ տարբեր միջավայրերի մէջ ունեցած է տարբեր հոլովոյթ. իաբի > իալի > իօի. իաբի > եբի: Այս «գիւտը» մի երկրորդ ապացոյց է, որ օտարի օ-ն երբեմն աւ է (իսկ մնացած դէպքերում n է):

Մենք լուծեցինք ոչ թէ մի բառ, այլ քերականական մի ձև, որ վճռական նշանակութիւն ունի լեզուների ազգակցութիւնը որոշելու խնդրում (տես A. Meillet, Linguistique historique et linguistique générale, էջ 88, 108, 297): Իր յոգնակի ածանցով վրացերէնը քոյրանում է յունարէնին եւ մօ-

⁵ Նկատեցինք ե-ի կորուստը.
ասիզն > աս(ե)զա՛ն > ասզա՛ն.
սո՛մեխ-ի > սո՛մ(ե)խբի > սո՛մխբի:

տեսնում է մեր լեզուական ընտանիքին: Երբ առիթ ունենամ յատուկ խօսելու հայ-վրացական լեզուական առնչութեանց մասին, ես բազմատեսակ փաստերով կը հաստատեմ վրացերէնի խնամութիւնը մեր լեզուական ընտանիքի հետ: Առ այժմ լուսարաններ մի երեւոյթ թիւրիմացութիւնները կանխելու համար:

Վրաց յոգնակի ածանցը — եբի յօն — եւ վերականգնեցի ե-ով եւ ոչ թէ է-ով: Վրաց այբուբէնը մի գիր ունի e ձայնի համար, որ է յ: Երեւակայէք, որ Ս. Մեսրոպն այսօր երեւար մեր մէջ եւ մենք գիր ունեցած չլինէինք ու նա այսօր մեզ համար գիր հնարէր, հիմք առնելով արարատեան բարբառը (Երեւանի): Նա կարիք չէր ունենայ ե գիրը հնարելու, լսելով Էրէս, Բէրէց, Էրէգ (Երես, բերեց, երեկ): Բայց նրա հնարած գրով տառադարձուած բէրէց բառը գրանով չէր դադարի վաղմի բերեց լինելուց: Գիրը կարող էր տարացնել գիւտի օրերին գոյութիւն ունեցող արտաբերութիւնը, բայց դա չէր նշանակի, որ գրերի գիւտից առաջ նրա տառադարձած է ձայները ե չեն եղած: Այսպէս պէտք է խմանալ եւ վրացերէնի պարագան: Նրա բոլոր e ձայները տառադարձուած են մեր գրով — յ — բայց այդ յ-երի մի մասն երբեմն եղած է ե, այսինքն՝ իա, իսկ միւս մասն՝ է, այսինքն այ կամ իայ ինչպէս մեր լեզուում: Պէտք է խարուել գրութեան հմայքից. գրի տակ պէտք է դալ եւ ըմբռնել կենդանի հնչական իրականութիւնը: Ռուսն այսօր աւ չունի, իբր օ, բայց տեսանք որ նրա օ-ն volkñ բառի մէջ մի վաղմի աւ է: Օտար կշիռները մեծապէս նպաստում են այս կարգի խնդիրների լուծման: Այսպիսով եբը եւ զուգադրում եմ օւ եւ եբի, անհիմն կը լինէր առարկել թէ վրացին գրում է եբի. ես ասում եմ, այդ է-ն նոյն արժէքն ունի ինչ որ է-ն մեր գաւառական Էրէս բառի մէջ, որ սակայն, ինչպէս գիտենք, եղած է ե (Երես): Օտար լեզուների e ձայները պէտք է համարուին կամ ե կամ է, իսկ օ-երը կամ n կամ օ (աւ) ⁶:

⁶ Վրացերէնի «գրաբար» յոգնակին կա՛ց-ն-ի (մարդիկ). պէտք է վերականգնել իբր *կա՛ց-ան-ի եւ կը լուծուի մեր կան-ան-ի ձևով յոգնակի կազմութեանց հետ. այստեղ հիմք առնուած է վրացերէնի «անհոլով» ձևը — կաց, որին կցած է յոգնակի ածանցը — ան. հմմ. իշ-ան, ձի-ան եւ մանուսնո՛ղ՝ նամակ-ան-ի, պատգամ-ան-ի եւ այլն, ու նաեւ պարսկ. دان و ար. Էւ այլն:

Ամփոփինք:

- 1. Մեր և եւ յ ձայները նախնական չեն. նրանք արտաբերական հոլովոյթի արդիւնք են. նրանք կամ սղած ի են կամ փոխարինում են ընկած բաղաձայներ, գրաւելով նրանց տեղը եւ լցնելով նրանց կորուստի հետեւանքով ստեղծուած յօրանջըր:
- 2. Բաղաձայների անկումը պատահում է շեշտից յետոյ եւ երկու ձայնաւորի միջեւ, ուստի յ + բաղաձայն եւ ւ + բաղաձայն խմբերի պէտք է վերականգնուին իբր յ + Ձ + բ եւ ւ + Ձ + բ խմբեր. հա՛յր (յ + բ) < *հա՛յար (յ + Ձ + բ). հա՛ւր (ւ + բ) < *հա՛ւար (ւ + Ձ + բ):
- 3. Օտար եւ մերազգի բառերը այս կերպ վերականգնելուց յետոյ միայն պիտի համեմատուին իրար հետ. vol-kñ > vawl || գայլ:

Ն. ԱՂԱՆԾԱՆ



ՇՆՆՈՎ

ԺԷ ԳԱՐՈՒ (1670) ՏԱՂԱՍՏՅ ՄԸ

Ձեռագիր Տաղարաններու մէջ երբեմն երբեմն երեւան կու գայ Ասապով, իբրեւ հեղինակ քանի մը հոգեւոր տաղերու: Մանօթ էր իր կոյր ըլլալը, բայց անձանօթ կը մնային իր անձն եւ ժամանակը:

Հ. Ղ. Ա. ի շան, Յուշիկը հայրենեաց Հայոց, Բ (Վենետիկ 1870), էջ 125, դասած է երգիչս Ժ. զարու տաղասացներու թուին մէջ: Ձեռագիրները սակայն, որոնք կը ներկայացնէին մեզի տաղասացս, առանց բացառութեան Ժ. (նաեւ Ժ.Ղ.) դարէ էին:

Ժամանակի այս անստուգութիւնը կը լուսաւորէ այժմ ձառոյց մը, որ անհաւատարի կերպով գրուած է Կոյր Ասապովի եւ Տիրոն սարկաւազի գրիչներով: Այս ձառոյցը տեսած է ի Թեհրան Հ. Աճառեան 1918/19ին եւ մանր նկարագրած (Յուշակ հայերէն ձեռագրաց Թեհրանի. կազմեց Հ. Աճառեան, Թ. 1. Անտիպ տակաւին): «Ձեռագիրս հիմայ կը պատկանի պարսիկ միջնորդի մը, որ կ'ուզէր ծախել որ եւ է գնորդի. ես այս ձեռագրերը տեսայ Պր. Չաքարիա Յակոբեանի եւ յետոյ Պր. Փրէնտեանի քով, որոնք տրամադիր էին գնելու» կը գրէ Աճառեան: Թէ յի-

շեալ պարուններէն մին կամ միւսը գնա՞ծ են զայն արդէն, ինձ յայտնի չէ:

Ձեռագիրը 38 x 25 մեծութեամբ, գրուած խոշոր բոլորգրով թղթի վրայ, շատ վնասուած վիճակի մէջ հասած է մեզի. նախնական իբր 721 թղթերէն այժմ մնացած են 508 թուղթ: Գրութեան տեղն է Սպահան, գրուած 1671/72ին, ինչպէս կը յայտարարէ Ասապով հետեւեալ յիշատակարանին մէջ (թղ. 116 բ—117 ա), զոր յառաջ կը բերեմ ամբողջութեամբ:

1. «Ուսանաւորք է.

Ո՞վ լոյսերամ դա՛սք քահանայից
լուսատեսիլ մանկանց պանծալի՛.
Առ ոտս անկեալ իմ աղերասլի
երեսս զնեմ ձեր դարչապարի:
Ի սոսկալի՛ յայսմ գիշերի՛,
որ ամենայն աշխարհ ողբ շարժի՛:
Դուք յիշեցէ՛ք զկո՞յրս ողորմելի՛,
զԱճապո՞վս տարտամեալ ողի՛:
Որ շատ հազիւ ես աշխատեցի
զսուրբ մատրեանս այս վայր հասուցի՛:
Եւ կցորդ ընդ ի՛մ աշխատողի՛
Տէրոն գրի՛չ սարկաւազ կոչի՛:
Երկոտարի՛ ա՛շխատեցի
ի յօրինա՛կն աստուածաշնչի.
Որ եւ գոտա՛ք աստուածաշնչի
լստ շարադրութեանն ձառոյցի՛.
Ի Առակացն յիւրում տեղի.
Եւ զՆոյային յիւրում կարգի՛:
Եւ զՊօղոսին յիւրում տեղի՛.
Եւ զԱւետարանն ի նման տօ՛նի՛:
Ի յօրինակ լա՛ւ ձառոյցի՛
ը՛ստ քաղաքին ըՄտամբօլի՛:
Ի Թուականիս հայկազան տոհմի՛
հրնդից քառա՛կ երկ յորել(ե)անի:
Քսան եւ մէ՛կ այլ յարաբարգի՛
յառաջ քան զմին կաղանդաց մարտի՛:
Մայրաքաղաքս՝ ո՛ր Շօշ անուանի՛,
այժմ Ասպահան սա՛ վերածայնի՛:
Մերձ առ գետո՞յս որ Յովբազ ասի՛.
ի նահանաւդիս որ Ջուղայ կոչի,
ի գառնաշունչ չա՛ր ժամանակի՛
որ կո՛ւ նեղիմք՝ ներգոյ այլազգի՛:
Եւ մանաւանդ այս եպարքոսի՛
որ Շխալի խան անուն ձայնի՛:
Այլ եւ յոմանց սո՛ւտ քրիստոնէից
սարակինոսք գլխաւորք չարի՛:

Թէպէտ անուամբ քրիստոնեայք կոչի՛ն,
այլ անիրաւք են քան զայլ ազգի՛:
Չոր տէր Աստուածն հանու(ր)ց համայնի՛
յինքն ա՛յց առնէ յիւր եկեղեցի:
Ազատեացէ ազգս քրիստոնէի՛,
արեամբ գնեալք Որդոյն միածնի՛:
Չարչարելոյն բառս վերերգեսցո՞ւք
որ խաչեցաւ այս մած ուրբաթի՛:

2. Թղ. 66 ա. Չխաւար Ասապովս եւ զՏէրոն գրիչս յիշեալս:

3. Թղ. 64 ա. ՉԱստ աւրհնեցէքն այլ ասա՛. զանիմաստ տկար գաշխատողս Ասապովս յիշեալս:

Յիշատակարանիս համաձայն Ասապով կենդանի էր դեռ 1671ին, արդէն «կոյր ողորմելի», «խաւար» աչքերով: Այսպէս «կոյր» եւ «խաւարեալ» կը ներկայանայ Ասապով նաեւ իւր տաղերուն մէջ: Կուրութիւնը սակայն կ'երեւայ թէ յետ ժամանակաց եկած է իր վրայ, որովհետեւ անիկա ծանօթ է գրչութեան արուեստի, ունի դադարիար լոյսի: Երկու տարի «չատ հազիւ» աշխատած է Ասապով ընդօրինակութեանս վրայ. ունենալով իրեն աշխատակից Տէրոն սարկաւազը:

Ձառոյցիս ընդօրինակութեան վայրը կը նշանակուի Ասպահան, «ի նահանգիս որ Ջուղայ կոչի». անշուշտ հասկնալու է Նոր-Ջուղան: Այսու կը ստանանք նաեւ Ասապովի հայրենիքը:

Տիրիւղէնի Համալսարանի Թ. 17 հայերէն ձեռագիրը՝ Ժամագիրք եւ Պարզատոմար, թղ. 165 բ եւ 242 ա յիշատակարաններու համաձայն ստացած է ոմն «Սօջայ Ասապով Երեւանցի»: Դժբախտաբար ձեռագրին գրչութեան, ոչ տեղն յայտնի է եւ ոչ ժամանակը (հմտ. Finck, Verzeichniss, էջ 15): «Երեւանցի» յորձորձումը բացի Երեւան քաղաքէն կարող է նաեւ Նոր-Ջուղայի Երեւան թաղն ակնարկել. որուն բնակիչները գաղթած 1602ին Երեւանէն՝ սովոր էին կոչուել «Երեւանցի»: Եւ որովհետեւ Ասապով անունը հազուադէպ անգամ գործածուած է, կարելի է թերեւս Ձեռագրին ստացիչը նոյնացնել ձառոյցի գրչին, ասով նաեւ տաղասացին հետ:

Այլուստ անձանօթ են մեզի տաղասաց Ասապովի կեանքի պայմանները. աշխարհակա՞ն էր անիկա թէ եկեղեցակա՞ն. ինձի առաջինն աւելի հաւանական կը թուի: Տաղասացս թէ՛ վերոյիշեալ յիշատակա-

գրութիւններուն եւ թէ՛ տաղերուն մէջ կ'անուանէ ինք զինք «Ասապով». անգամ մը միայն՝ Յիշատակարանին մէջ կոչուած է Աստուածապով («Աճապով» վրան պատիւ): Հ. Աճառեան (անդ, ծանօթութիւն) կը ստուգաբանէ անունս իբրեւ կաղմուած Աստուած եւ ապով «յուսացած, ապաւինեալ» բառերէն. «կրճատ ձեւն է Ասապով, ինչպէս ունինք Ասատուր = Աստուածատուր»:

Աչուղ-տաղասաց է Ասապով: Իր տաղերը սրտի հառաչանքներ են, ուղղուած Աստուածածնին, ամէնն ալ յօրինուած կուրութեան օրերուն: Թէեւ չունին առանձին հրատարակ, ըլլալով պարզուկ տաղեր, բայց երգուած են անոնք հայ ժողովրդէնէն իրենց անմեղ բովանդակութեան համար: Ինձի ծանօթ 5 տաղերէն վերջինը գրուած է տուն մը հայերէն եւ տուն մը պարսկերէն:

Ասապովի տաղարանը կը բաղկանայ հետեւեալ տաղերէն:

- 1. Տաղ դարնան ի վերայ բլրուլի:
- Ահա եկեալ է գարուն (աղուն), բլրուլն է նստել վարթոյն քաղցր ձայնիւ նա երգէր, գովէր գտէր ամենուն...

Սկզբնակապ գրերը՝ ԱՍԱՊՈՎ:
Ձեռ. Berlin, Or. Ms. oct. 446, 178 ա (Ժ. դար) վերջը պակաս: Tübingen, Ma 98, 174 ա (1668. հմտ. Finck, Verzeichniss, էջ 157). Գրադարան Լիւբլա թաղի. Թ. 2, 82 ա (Ժ. Թ.). հմտ. Աճառեան՝ Յուշակ հայ. ձեռ. Թաւրիզի, Վիեննա 1910, էջ 62:
2. Տաղ առ սուրբ Կոյնս:

Անարատ տաճար, մայր ամէնօրհնեալ Տիրուհի կոյս անհարսնացեալ, օրհնեալք ի կանայս...
Վ. Կոյր Ասապով զի՞ կաս վարանեալ, ով գրի, մատո՞ սուրբ կուսին դու միշտ գոհութիւն...:

Տներու սկզբնակապ գրերը՝ ԱՍԱՊՈՎ:
Ձեռ. Berlin, Ms. or. oct. 446, 175 ա (Ժ. Թ.):

3. Տաղ աղօթական առ սուրբ Աստուածածինն:

Առ քեզ գոչեմք արտասուելով, աղաղակեմք ողբալով. յոգոց հանեմք հառաչելով, մեղայ ասեմք միշտ լալով.